



մանաւոր՝ բայց հարեանցի իմն ինչ խօսակցութիւն ՚ի վերայ  
բարեխօսութեան սրբոց ։ Երկրորդ՝ անցքն յաջորդեալ աւուրն  
են այսօրքիլ ։ Զի հայեցեալ ՚ի արամութիւն եկեղցն առիս  
զնացի ՚ի վաղուի ՚ի ընտելութիւն նորին ( և ոչ յեկեղեցին  
Աստուծոյ և վասն ամբարշտոյ զսիրտս նոցա ասացի ցնոսա ) ա-  
ռանց սրբք իւրք քառանո՞ խոսարմանո՞ Էմանաիլա՞ թէ վասն խա-  
ղաղութեան որպէս ինչոքեցին նոքա ։ պատրաստ եղէց զալ ՚ի  
Իսան ։ բայց իբրև լոկ օգնական նոցա մինչև ցՉատիկն , և  
չընդունեցի առնել զայն առանց նոցա ՚ի ձեռս պարոն Եկեղց-  
պանին ինչորէլ լինէն յայբօսակս , որպէս և ես այնպէս արարի  
և որպէս ամենեքեան տեսին ։ և որպէս երևի ՚ի թղթակիցու-  
թեանց ընդ այս առաքեցեալ ։

Ես խոստովանիմ և հաւատամ յԱմենասուրբ Երրորդու-  
թիւնն , և ՚ի տէրն մեր Յիսուս ։ Քրիստոս որդին Աստուծոյ ։ և  
չափնա՞ն առանձնաշնորհութիւն նորա , այսինքն լինել նա  
“մի միայն ճանապարհ , ճշմարտութիւն , և կեանք ։” “մի միայն  
Յոյս մեղաւորաց ” ( որոց զլուխն ես եմ ) և “մի միջնորդ Աս-  
տուծոյ և մարդկան ” ։ և “ Անուն նորա Գառն առնուլ զորինչ  
ինչոքեցեմք յԱստուծոյ ” և “ որ հաւատոյցե ՚ի սուրբ Անուն  
նորա հաւատալ ևս պարտէ նմա՞ առանց Ի-իս կարօտելոյ միջ-  
նորդութեան ուրուք սրբոց , ՚ի բաւականութիւն հեղման  
արինս նորա , որով զնեաց զմեղ ։ և որով սրբեաց զմեզ յա՞ճ-  
նա՞ն մեղաց մերոց ” “ գնոց զնեցայք մի լինիք ծառայք մարդ-  
կան ” ասէ Առաքեալն Քրիստոսի ( 1 Կորն-7— 23 ) կամ այլ  
Շնորհօքն Յիսուսի Քրիստոսի հաւատամք սպրկել , զոր օրե-  
նակ և նախ ” ( Գործ 15-11 ) Գարձեալ “ Եւ չեք այլով իւրք  
իբրևութիւն , զի և ոչ անուն այլ զոյ ՚ի նե՞տոյ եկեղեց տու-  
ւեալ ՚ի Տարբիչ ( բաց յանունէ Տեառն մերոյ Յիսուսի  
Քրիստոսի ) որով արձան եցէ կեալ մեղ ։ ” ( Գործ 4-12 )  
Հաւատալով ( նախ քահանայից , և յետոյ ժողովրդոց ) յայս  
պիսի աւետիս իբրևութեան յԱւետարանի մերում որ առ մեղ,  
որպէս ընթերցեալ լինի յամենայն աւուր յեկեղեցու մերում  
և որով ուսանիմք զամենայն ՚ի պէտս հաւատոց մերոց , ապա  
թոյլ տուր ինձ հարցանել թէ՞ կայ որք այլ զիւրք թարձ զայն  
որով կարողէք քարոզչն քարոզել մեղ զհաւատս , կամ ունի-  
ցի նա իշխանութիւն քարոզելոյ զայն ։ և եթէ քարոզեցոց ,  
կարողէ նա մնալ առանց դատապարտութեան , վասնորոյ և  
կարծեալ զուր թէ կարողիմ ես , կամ ովոք և եցէ , որ ունիցի  
այսպիսի աւետիս՝ ընդունել զկարծիս իմ՝ մարտ , որեթէ  
գեւ ևս չէ յայտնեցեալ միանգամայն հասարակութեան , առ-  
կաւին քեղ և մեծ բաժին ՚ի հասարակութեան ծանուցեալէ ։  
և հաւատան լինիլ ոչ թէ միայն անմարտ , այլ ուղիղ և  
ճշմարիտ վարդապետութիւն , ի՞ր շահէ մեղ ։ եթէ մարդկան  
հաճոյ լինիցիմք , և ուրացեալք լինիցիմք յԱստուծոյ , Զի ե-  
թէ խոստովանիցիմք զՅիսուս և ոչ զամենայն արածութիւնս և  
Շնորհան նորա կամ բաւական չհամարիցիմք զայն վասն աշ-  
խարհի ։ որ օրուտէ մեղ ։ և ոչ ապաքէն յայսպիսեօքն ուրա-  
նամք զնա ։ և ուրացեալք լինիմք ՚ի նմանէ առաջի Հօր իւրոյ  
որ յերկիւնս ( Մատ . 10-33 ) Եկեղեցին մեր երգէ , ասէ և առնէ  
որքում ինչ , ստացեալ և արարեալ ճարտարմտութեամբ ,  
“ որք եմ ըտ մարդկան աւանդութեան ։ և ըտ տարեց աշ-  
խարհի ։ և ոչ ըտ Քրիստոսի ” ։ յորմէ Առաքեալն ասէ մեզ  
զգոյշ լինիլ , և յորդորէ զմեզ ասելով “ որպէս ընկալայք ըր-  
Քրիստոս Յիսուս զորէ իտիկն զնա ջիւք ։ Արմատացեալք և շե-  
նեալք ՚ի նա , և հաստատեալք ՚ի հաւատս որպէս ուսուցին առա-  
ւելեալ ՚ի նմին զոհութեամբ ” ( Կոր . 2-6—7—8 ) Կարէ ոք ՚ի  
քահանայից սկսեալ ՚ի Կաթողիկոսէ մինչև ցՉորրորդ աստի-  
ճանաւորն , կամ ունիցէ այլ անձն ուսուցանել կամ պար-  
աւարել ժողովրդականաց իւրոց հաւատալ յինչ արտաքոյ

Առաքելոց քարոզութեանց ։ կամ Եկեղեցական Հանգանակի  
այսինքն Հաւատամքի որ յամենայն աւուրս ընթերցեալ լինի  
յեկեղեցու մերում և յամենայն ժողովուրդս ( որով միայն՝  
եկեղեցին կոչի եկեղեցի ) յորժամ միասիրտ և միախումբ հա-  
ւատան և ասնն զնայն ։ “ Եղբարք ես ոչ համարիմ զանձն իմ  
թէ հասեալ իցիմ բայց մի ինչէ ” զի գառն չեքոյն մուս-  
ցեալեմ ։ ե ՚ի չառա՞ւարէ՞ման նկատեմ ։ ( Փիլ . 3-13 ) Բաղում  
բանք սակս հաւատոյ մերում , կամեցու թեամբ Տեառն ունեմ  
ասն ։ այլ՝ չե՞է հասեալ ժամն ։ Ահա այսքան վասն զբար-  
տանոցս ՚ի վերայ իմ՝ Գառն աշխարհն բաւ համարեմ ասել ,  
թողուլով զմնացորդս ՚ի ձեռս Արտագիտին Աստուծոյ , որ զի-  
տէ զօրիտս մարդոյ ։ և քննէ զմիտս և զերիկամսնս մեր ,  
յուճմէ յԱնուամբ որդւոյն իւրոյ ինչոքեցուք տալ մեզ  
զճշմարիտ խոստովանութիւն և զղջումն մեղաց մերոց ամէն ։

Կնդրելով զնեւումն այս երկար գրութեան մերոյ , և միշտ  
ցանկանալով քեզ անաշտու դատումն ՚ի պէտս ճշմարիտ հա-  
ւատոյն Քրիստոսի Տեառն մերոյ , և ՚ի պարձանս Ազգի մերում  
Մնամ թանգ Պարոն ,

Քոյդ միշտ հաւատարիմ Ծառայ  
Հրաժարեալ Գաբր .

Կալիաթայ  
9 մէի 1849

Օ ՌԻԱՐԸԱՆՍԱՐԻ արդարեւ , տեսանելով  
զի սրատուելի Հասարակութիւն մեր ՚ի Կալիա-  
թա՞ ճաշակել սկսանի զպտուղս ազգային յա-  
ռաջող իմութեան , ճաշակել սկսանի ասմաք ,  
և զմայլի քողցրութեամբն ։ Արդէն իսկ հրա-  
տարակեալ է մեր , թէ զիմարք Մարդասիրա-  
կան Ղեմարան , իբրև զմայր խանդակաթ դիր-  
կրս եբացդարձի որւուոյն սիրելոյ Բժիշկ Սար-  
գսի Շիրխօսեանց , և զՊիւրանս սլատասխա-  
նեալ՝ պահեաց զնա առողջուն զաւտկացն խա-  
մատար ։ — զնոյն արար և Սուրբ Սանդուխտ  
Պարոց ։ — բայց որ մեծ քան զամենայն ։  
Կազարիթոյ սուրբ Եկեղեցի մեր ՚ի Կալիաթա՞  
յատուկ խնդրանօք հասարակութեան Ազգիս ։  
և Հաճութեամբ սրբազան վիճակաւորացն՝ յա-  
ռաջողրեալ է ընտրել զնա ՚ի մատակարարու-  
թիւն գեղաց մատակարարացն Բանին Աստու-  
ծոյ ։ Հաղիւ մինչ ցարդ տեսեալ էաք զհայ  
ոք ՚ի Կալիաթա՞ այսքան սիրով և բարեմտու-  
թեամբ ընտրեալ ՚ի սաշտօն գէթ երկուց հա-  
տարակաց հաստատութեանց միանգամայն , իսկ  
սա ոչ միայն երեցունց միահաղոյն , այլ և զրե-  
թէ միոյ միոյ առանձին՝ գերդատանի ազգիս  
մերոյ , որ ցուցանէ նախ՝ զմեծ կատարելութիւն  
նորա յարժուան վառուն պատանի կութեանն ,  
և ապա սեր և խնամ ազգիս առ ազգային յա-  
ռաջող իմութիւնն , Ազնչեմք ուշով ՚ի միտ  
առնուցու լրութիւն չափուհասից , թէ այս ազգ

Հայոց է , որ պատուեացն և պատուէ զճշմարիտ ուսումն անդամաց իւրոց յամենայն դէպս . և չունի ոք իրաւունս տրանջելոյ զմտանէ :—

Մի ինչ սրակաս մնայ ՚ի կատարելութեանց անտի , և գայն ամենախնարհաբար յիշեցուցուցանեմք պատուելեաց մերոց , աղաչելով՝ որ եթէ բարի տեսանիցեն , շնորհ արասցեն հետեւել :

Աղքատք մեր բժիշկ չունին , և թէպէտ Պարոն Սարգիս Շիրխօռեան թէ յառաջ և թէ այժմ և հետեւէր ձրի բայց հետեւիցէ ամենեցուն , եթէ շնորհ արասցէ պատուելի ազգ մեր մասամբ ինչ ՚ի հանգանակութենէ , և մասամբ ինչ ՚ի գանձուց եկեղեցւոյն գումար հաւաքել և որոշել նմա , որով կարիցէ խնամ տանել և բազմութեան աղքատաց մերոց , ամենայն ինչ կատարելալ լինի :

Բայց զի մի այս ձրի շնորհ և ազգային գթութիւն ծանրացի ՚ի վերայ պատուելի հասարակութեան մերոյ . և զի աղքատք յետ գտանելոյ զերատ բժիշկն մի գուրի մնացեն ՚ի դեղոց , խնորհաբար առաջի առնեմք պատուելի հասարակութեանն զի տարեկան վարձ բըժիշկն սուրբ եկեղեցին մեր տացէ . և հասարակաց հանգանակութիւնն ամբողջ գումարեալ յանձնեսցի ՚ի ձեռն տարոն Սարգսի Շիրխօռեան գնել և պահել ՚ի ներքոյ իշխանութեան իւրոյ զդեղարան մի , որ կոչիցի աղգային դեղարան : Վարդք յազգէս մերմէ փոխանակ յայլոց՝ անտի զինեցեն զպիտոյս իւրեանց . որով մայր գումարն անձախելի մնայ , և միայն շահուքն՝ աղքատք ազգիս ձրի գտանեն զլեղս իւրեանց : Բայց լսի թէ՝ քթի ուրումն առաւոյս հասարակաց և ազգային ընտրութիւն , որ ամենայն ոգւով ջանացաւ ջրել զայն :— Յետոյ զոյսմանէ , շնորհաւորելով զսանձն՝ զոր հասարակութիւն մեր ինքնին եւ ՚ի կղակ իւր և ես զճայրն այնպիսոյ ուրուք :

Պարոն Յովհաննէս Մէլքում Մանուկեանց , որ թէպէտ և ՚ի ծաղիկ հասակին թառամեցաւ ՚ի բարերար կեանց անտի . չնաչխարհիկ ազգասիրութեամբ նոր և յաւիտեական յիշատակ թող զկնի զօրինակն : Սա յառուրս կենդանութեան իւրոյ , յորժամ չկայր ոք բժիշկ յազգէս մերմէ՝ յիւրոց գոյից վարձ

հաստատեաց անդիացի բժիշկ ուրուք յառակապէս վան անկարողաց ազգի իւրում : Եթէ իցէ ոք՝ որ ոչ հաւատայ մեզ , աղաչի գէթ անցանել զխոնարհ խրճթօք հաշեալ և մաշեալ Հայ Քրիստոնէի ուրուք , և տակաւին լսէ հօժել նորա ՚ի նեղութեան անդ իւրում՝ “ Այ՛ Յովհաննէ , Յովաննէս , դու հայր և բարերար մեր , ամսոս , որ մեռար :” Եթէ սա մի միայնիկ , կարաց իբր տասն հինգ ամօք յառաջ զայս առնել , յորժամ առաւել հազուադիւտք էին բժիշկք յայսմ՝ քաղաքի , և անհայք ամենեքին , զարգիս ո՞ր է , որ տկարացուցանել կարիցէ զմեզ , այն ինչ ողորմութեամբ բարերարին ազգ մեր օր ըստ օրէ տառելու ՚ի թիւն , եկեղեցին անկարօտ , բըժիշկն՝ Հայ . և բժիշկելիքն միանգամայն կարօտուորք և արժանիք գթութեան :

— Ի 21 թուոյ մերում յիշատակեցաք թէ ժողով անդամաց կառավարութեան Վարդապետիկան Ղեմարանին ազգային ոգւով ընտրեաց զՊարոն Սարգիս Շիրխօռեան ՚ի տեղի Պարոն Պիտրսին . առ որ իբրև զբեաց զգիտումնն փոխանակ պատասխանելոյ նորա “ Թէ արդար և մեծ ուրախութիւն է ինձ տեսնել զայսպիսի ազգային եռանդն ՚ի ձեզ , և ես ոչ միայն զուարճանամ ընդ ընտրութիւն Պարոն Շիրխօռեանին այլ և պատիւ անձին զիտացից մատուցանել նմա և Հաստատութեան ձեռոյ զօգնականութիւն իմ ՚ի դիպել հարկին ,” զբեաց թէ՝ ընդ այլոց դեղջուկ լուտանացն “ կառավարութիւն Ղեմարանին էր ՚ի ձեռս այնպիսի անձանց՝ որք թէ աղգային ոգի ինչ , ոչ գիտէին :” Եւ առք թէ մին ՚ի սոցանէ դարձ առնել խորհէր նամակն նորա . ասելով ցնա պարգաբար թէ՝ “ որ ազգ չունի , զինորդ կարիցէ դատաստան առնել ՚ի վերայ աղգային զբացմանց :” —

— Պատուելի Տիկին Սեմօն Ստեփանոսեան հանդերձ ուստերքն Ստեփանոսաւ , և երեք դասերօք եհաս այսր ՚ի Սինկափորայ ՚ի 3 ամսոյս : —

— Պարոն Սահակ Մ. Տէր Մինասեանց ել տէրութեան շոգենաւով ՚ի Մուլմիան , գնալ անտի ՚ի Ուանդուն և ՚ի Հաւա՝ վաճառականական գործով :

— 'Ի վեցերորդում ամսոյս յաւուր կիւրա-  
կէի զմիտ ժամու զինի միջօրէին որոտաց թըն-  
դանօթ երկոյն 'ի Բերթէն Ա իլիէմայ, զի ամե-  
նայն զօրութիւնք, թէ թուիս թէ ճերմակք, պատրաստեցին ընդ յառաջ ելանել սպարա-  
պետին Սր Չարբս Կեպերայ, որ հաս յայն օր  
'ի Ասլիաթա, Բաղմուս թիւն բնակչաց մայրա-  
քաղաքիս զեղան 'ի գետտին Գանդէսի, ա-  
ռաւելապէս 'ի զինն զինուորական հանդիսին և  
'ի վիայութիւն քթի քաջին Մ իանու : Անցին  
ժամք երկու, գնաց և զայրոցաւ արեգակն տա-  
պախարչ բոցով իւրով, և զբեթէ հուր իջա-  
նէր քան թէ ջեր կենդանորար : Հծծիւն աս-  
տի, և ճծիւն անտի, թէ ուր եցին, ընդէր ոչ  
եղանկցին զօրք հաստ բրդեղէն տարազու և  
ամենայն զինուորական պատրաստութեամբք իւ-  
րեանց փորբերան լինել 'ի սլաուս սպարապետի  
իւրեանց, Այլ գովութեան արժանի՝ զի որոց  
զփորձ առեալ էր եղանակի աշխարհիս և հաստ  
սարուց զօրականին՝ զթացաւ 'ի նոսա, ասպ  
թէ ոչ մեծ մասն 'ի նոցանէ վտանգ էր և վնասէր  
'ի կենաց, Գեա այն ինչ նոր զթային մարդիկ-  
'ի վերայ մարդկան, մինչ Աստուած գթացաւ  
'ի վերայ համօրէն արարածոց : — Իբրև հաս  
չոգեանն՝ որ ձգէր զինի զսկեցուկն իշխա-  
նաւ յանդիման բերդին՝ յարեաւ մրրիկ ահե-  
ղազոչ, և յարոյց քուլս քուլս ամպս փոշոց  
գէտ 'ի գետ անդր, մինչև ճածկեցաւ յաչաց  
մերոց բաղմութիւն նաւաց, երկիր, և երկինք  
միանգամայն : Եւ արդարև զինչ՝ իցէ մարդ ա-  
ռաջի Ամնակարողին Աստուծոյ բովանդակ  
փառօք իւրովք — այո՛ և Հօրն Միանու ինք-  
նին, — աննշան օրդն մի : — “Այ բեկաւ շոգե-  
նաւն շնչէր մին, վայ խորտակեցաւ ասէր  
միւսն, սա՛ աստի թէ՛ յերեսաց Հօրին յառ-  
նէին հողմունք, և նա անտի թէ՛ յերեսաց  
Հօրագունին գեռ յառնելոց էին : — Բայց  
որ բարեմիտք էին յամենեւին՝ միայն աղօթս  
և պաղատանս առնէին առ Աստուծ վասն փր-  
կութեան նորա, Յօղացաւ զինի շող իմն  
անձրեաց, գաղարեցաւ հողմն, և նորին գե-  
րազանցութի հասեալ յանդիման ջրլցին Բա-  
րուի կոչեցեալ՝ ել 'ի ցամաք և չոգաւ 'ի պա-  
րտան փոխարբունական, Գիմաց նորա իշխէր  
միայն քիթն կամարեալ, այաուցն՝ դալուկ

զերդնադոյն, և հասակին՝ ճերութիւն : Յա-  
ռարկել միում 'ի հանդիսականացն թէ ճեր  
իցէ, պատասխանեաց բարեկամն ընթերակայ,  
“ զի փոյթ հասակին, դա մասօք պատերազմի,  
քան ձեռօք : ” —

— Օ իրօք յարձակման Աղուանից 'ի վերայ  
Մինգայ, յորժամ ամենայն զօրութիւնք Անդ-  
ղիսցոց պատալեալ էին 'ի պատերազմունս  
Փանջաբայ՝ խօսեցեալ է մեր յառաջագոյն, բայց  
զարդիս Գեհն առեալ կուր Արեւու լրագրէ  
ասէ, թէ Ամիր Գօստ Մահամադ դիտաւու-  
րեալ 'ի վերջին կործանումն Անդղիսցոց 'ի  
Հնդկաստան՝ դաշնադիր եղև ընդ իշխանին  
Ղանդահարայ՝ աղբակցի իւրում, որ ունէր  
զօրս իբրև քսան և հինգ հազար, որոյ երկո-  
քին կրտերագոյն եղբարքն Խանդել և Մե-  
նարդել խաղացին զօրօք 'ի դաւառն Փիլին,  
և մնացին անդ եղբօր իւրեանց երկոցու Խուն-  
դել անուն, և 5000 զօրաց նորա : Ուր յետ  
կալոյ զառուրս բաղումն, իբրև տեղեկացան  
թէ Խունդել ոչ յօժարէր զալ միանալ ընդ  
ինքեանս, այլ ընդհակառակն ամբոցուցանէր  
զՂանդահար և զամրոցս նորա՝ զայրացեալ  
սոցա դարձան և 'ի վերայ յարձակեցան քա-  
ղաքին : Բայց փախստական վարեցան անտի  
կորստեամբ 1500 արանց, Չորիցս ճակատ յար-  
դարեցին ասի, այլ թնդանօթաձիգք նոցա ան-  
պիտանք գորով ոչ կարացին առնել ինչ : Արի  
թէ Գօստն, կամ մի ոմն յորէնոց նորա միջ-  
նորդելոց է հաշտութեանն 'ի միջի նոցա : —

Ասացաք, և դարձեալ ասեմք, զի մասն  
Աստուծոյ հրաշափառապէս օգնեաց Անդղիս-  
ցոց 'ի Փանջաք և յայլ ուրեք, Բանդի այն  
ինչ յաղթեցեալք՝ յաղթող գտան 'ի վերայ  
Միբաց, և այն ինչ յանպատրաստի՝ ոգի խո-  
վութեան արկ Տէր 'ի թշնամիս նոցա, որք  
եթէ գոյին՝ մեծ խոչ ընդակն լինէին յաջո-  
ղութեան նոցա :



ԲԹԱՎԻԱ

“Խօսեցայ 'ի յետին գրութեան իմումանդ  
իբր 'ի բրբունջ զնոյնութենէն որ տիրէ աստ  
'ի ձանձրոյթ նորասիրաց, սակայն չարարի  
թերևս 'ի խրախոյս ինչ սրտի յուշածեղ ԼՂ

նորոգ տեղի կալեալ շարժմանէն՝ որ երևի՝ սուղ ինչ թօթափել կամի զթմրութիւն մեր : Քանզի՝ առաջարկութեամբ ոմանց երևելի վաճառականաց Էւրոպացոց ստաի և ամենից պարտատ շահարկութեամբ և հարգանքով : սուրբ իմն ունակական և պատուական՝ որ այնպէս գերազանց կայոյցանէ զԱրևմտականս — Հաստատեցաւ ՚ի քաղաքիս՝ Միաբանութիւն մի Արևմտականական որ բանի յառաջիկայ Արևելի ամսոյն : Որոյ նպատակն է ՚ի գիւրացուցանել զՀայթ Հայթութեան ամենայն նորարոց գլխաւ որտակէս Հայերով յԱռևտրականս : — Աստ մարթ է տեղեկանայ յամենայն ժամս : սխեալ ՚ի Տ ժամէ առաւօտեան ցճ դէպ արևմուտս՝ ամենայն գիտելեաց թէ Օրական դեր և մտից նաւուց և վաճառաց , և թէ այլ պէսպէս հանգուունակ իրողութեանց : Որոշեացին քանի ժամք աւուրն ՚ի ժողովել վաճառական Պարոնաց՝ որք կամիցին հանդիպել միմեանց և հարորդակցել յառևժախս և յայլ առարկայս :

Գացին աստ ամենայն Օրագիրք տեղեաց ՚ի լեզու Հորանդացոց որպէս և միւս , երևելի Գարցեաց : — Արևմտականք միայն ընկալցին յանբամբ , և Անգլաք միայն արտայեն մուտ անբար , բայց եթէ նորիկ ոք , կամ ասն , նաւապետ ընկերակցին՝ ներեսցին մտանել , Չափաւոր ուտեստ և ըմպեստ դոցին անդ , (վճարելով) ՚ի զուարճութիւն և զօրացուցումն քրտամբ վատակող վաճառականացն , այլ անշուշտ մի ինչ անչափ կամ անվայել աստ բնաւ ուր պատկառ սրբիկ շտութիւն պանրակեր տեսարց մերոց նշանաւորք են յոյժ բարկատութեամբ ընդ ձեր բիր ըմպողացն : Արևմտացն առ այժմ՝ 15 տասնհինգ Ուոլփի ամսական (՚ի Յունվարէն հաշուեալ) այլ դուցե նաւաղեսցի առաւելութեամբ Ստորագրողաց , որոց թիւ հասանէ այժմ՝ 575 : ՚ի փոքրիկ մերոցաց՝ արդ անբամբ հանդիսացան Պարոնայք Յովհաննէս Ս. Մկրտչեան , Գրիգոր Յովսէփեան և ձեր խոնարհ ծառայ , Ա. Պ. Աղանուր . մասամբ որոց հաճեցաւ միաբանութիւնն ստորագրել Աղաախրի Արարատեան Կալիաթայ և Հայաստան լրագրին . որոյ վասն խնդրեմ հաճեսցիք առաքել շոգենաւան շարու-

նակ ՚ի պատուական լրագրոց ՚ի պէտս ասացեալ միաբանութեանն . որոյ հաստատութե մողթեմք յաջողումն , և յուսամք բարեգուշակ լիցի բարեգունութեան սուրբաւութեան քաղաքիս՝ մինչ յետայսու :

«Պատահեցաւ ուրեք զի մինչ դեռ խօսէին Հայք զհայերէնն՝ Հորանդացին լուեալ նկատէ որպէս թէ ընդ հենդն ուղղելով առ նոսա՝ բարեկամք ձեր լեզուն շատ դաշնաւորի ըստ չինէացելոյն» — Պատասխանէ Հայն այդ չբառնայ մեղ նախատինս զի չինէացիք և՛ մարդիկ են և՛ ազգ , այ՛ և ազգ երևելի ՚ի վերայ երկրի . սակայն ներեսցես ինձ նկատել զի յորժամ դէպ ինի ինձ լսել զՀորանդերէնն բաղմիցս սխալիմ փոխելով զայն ձայնից խողաց՝ ընդ լսօ , խի , խտութեամբն , «Խօզ Քրոդամդ» ասելով գնայ ՚ի բայ :

Չիւս : — Մարտի 30 թուով լուր եհաս ՚ի Հոնգոնգ՝ թէ ՚ի պատճառս տկարութեան ծովապետին և նաւերոյ Ինգլիզի նաւուն ՚ի հիւսիս , հրամանատարութիւն նաւական զօրութեան ՚ի Չուրս Չինաց՝ յանձնեցաւ պատուելի նաւապետին Կեպտելոյ , և հասարակաց ընդունելի եղև :

«Քաղաքական եղանակացոյցն Կանտոնայ յերևեհջս կայր , և չէ դիւրին ինչ դուշակել թէ զինչ անցք անցին ՚ի վեցերորդումն Արևելի» (որ Աւագ ուրբաթ էր Անգղիացոց) Թոճ զգաղարումն Չին առևտրականացն բլրդոյ և կտաւոյ՝ նորոգ աղբային պահապան դունդ գումարեցաւ որ հասանէ , ասեն , ցհաբիւր հազար մի , արանց կրթելոց մասամբ : Այլ թէ արդեօք վասն ահ արկանելոյ ամբոխին , և թէ այլ իմն վաղճանի աղաղաւ՝ դեռ ևս յայտնի չէ : Քիչքէն խարսխեաց յանդիման Անգղիացի Գործատան ՚ի պաշտպանել զնա , յինքն ընդունելով և զարքունականն անուանեալ նաւաղունս , յորժամ Քիչքէն և Արեք բարձեալ տարան զնաւաստիս տորմզին ՚ի Ամպոյա :

Քանի աւուրքք յառաջ համբաւեցաւ թէ երկուք ՚ի Չինաց , որք ծառայէին գործատան Անգղիացոց կալեալ գլխատեցան ՚ի սրկայից անտի , բայց խրոխտ պահանջումն փոխանորդի դեսպանին ՚ի դերև եհան զոյն :

Վասն բանալոյ դրան Կանտոնոյ առաջի երեսաց Կնդդիացոց՝ Բանճամ խնդրեաց ՚ի Սիւայ գոնէ դաշին կատարելոյ մտօք՝ թողցի իւր անձնապահօքն մտանել ՚ի նա : Եւ դրեաց առ կայսին , և նա պատասխանեաց՝ եթէ կայութեան ժողովրդեան Չինաց հակառակ չիցէ , արասցին զայն Գան գրեւոր . զի մտցէ և երցէ միայն , և ապա դարձեալ զինի փակեցցի դռունն : Եթէ բանն ՚ի կատար գնաց՝ ուրեմն ցրուի անտուտ տորմիզն Կնդդիացոց , իսկ թէ ոչ՝ ֆնայ մինչ զալ հրամանին յԱ՛գգիտոյ :



### ՀԵՆՃԵՐ ԿԵՆԴԵՆԵԱՅ

Օքնական հանճարոյ երկվարին Աշխոյժ անուն՝ ընթեռնուամբ յօրագրի միում . —

Օգիշերն բովանդակ զուղի հատեալ ընդ կիրճ և ընդ կապան չօզը Սուլթան անապատին , ընդ այգուն հասաք ՚ի դաշտ անջրդէ . և կարավանն յուսցեալ հօգով եկաց յաղօթս առ Աստուած : Կնդրեցի և ես ՚ի գետին , և չև աւարտեալ զստեղծականն իմ խիստիցայ ՚ի քուն . և ոչ ինչ խմացոյ , մինչ երբեմն խմանջիւն ահեղ , երբեմն թափ սանձուն՝ որ ՚ի կռան իմում , և երբեմն կծկծումն ատամանց երկվարիս՝ յարոյց զիս ՚ի մահօրինակ թմրութեանէ անտի խմէ : Օարթեայ , կարավանն մեկնեալ էր , — ճանապարհք ինձ անձանօթք էին , և ահա ՚ի թիկանց հեծեալք երկու՝ սաղաւարտ թաղեայ զգլխովքն , և կարծիկ կայճեայ զանձամբք , սուր յաղբերս և նիզակ ճօճ ՚ի ձեռսրն՝ քաջարշառ ՚ի վերայ յարձակելին : Խաչակնքեցի զիս , հեծայ մինչ հասուէհաս էին նքա . և թողի զԱշխոյժ իմ ՚ի կամս իւր : Ուր օգապարիկ արժուոյ նմանեալ գողջիր , առ զիս , և սրացաւ խուսեցաւ ՚ի բաց : Մին ՚ի հուզկահարացն ընդ այլ ճանապարհ՝ ՚ի կուսէ բլրակացն , զսառնա կալաւ , երկցո ՚ի բացուստ աղաղակեցի չմեղանչել յիս՝ յայր ճանապարհորդ , և ՚ի չորրդին՝ ուսմբ հրացանի իմոյ սրով եղ յանդիման նորա զճին ՚ի ներքոյ : Օհեա հասանէր ընկերն զայրացեալ՝ մինչ զառաջեալ բանէր ձորափօր հեղեղափախ իրիք , չոր և խոր . — Թուանէր յայնժամ ՚ի թմբէ ՚ի թումբ Աշխոյժ իմ՝ հրեղինիկ , և ՚ի թուանելն ուժգին՝ ձիէր

՚ի թաթոյն : Ստուցեալ ՚ի նստոյ թամբին հարայ զգլխով նորա , բայց նա այնքան ՚ի վեր պահեաց զգլխուն , մինչ կալայ դարձեալ զնիստ իմ , և ապա յարուցեալ՝ զրեթէ իմացական իմն սրբանօք յետս ընդ ետս հայէր , և տեսեալ զանարին հետամուտ դեռ ՚ի ինդ իր անցի իրիք՝ արհամարհանա փնչելով ՚ի նա՝ սիգաձեմ ընթանայր զճանապարհն , մինչ հասուցանէ կարավանին յէջ անդր :



### ՀԱՐՈՒՆԵԿՈՒԹԻՒՆ

### ԳԱՏՄՈՒԹԵԱՆ ՀՆԳԿԱՅ :

Աթաք ամաչեմ՝ աստանօք գանգաձեւ զանգուշութենէ և զտգիտութենէ մերոց Սպարսպեաց և Հազարապետացն , քանզի ՚ի ձախորդութեան ժամանակիս յայտնիկ , նա ինքն Գօրգին խան իշխան լինելով , գքաջս Ազգին իւրոյ ոչ պատուեաց , տարով նոցա պատիւս նախկին մեծութեան իւրեանց . և ոչ յորդօրեաց զնոսա ՚ի քաջութիւն , որպէս վայել էր խոհեմ և քաղաքավար իշխանաց . այլ զնրհակս սոցին բարբառէր նոցա ասելով , թէ դուք առիթ եղէք կորուսանելոյ զերկիրս , և արարիք ինձ պատարակ ՚ի մէջ ամենայն աշխարհի , որ ոչ հնազանդեցայք հրամանաց Սմբուայ սպարապետին ձերոյ : Սա սյսպէս : Եւ Հազարապետքն մեր վասն նախանձու սրախց իւրեանց , կորուսին զամենայն անուն քաջութեանց և շքեղաշուք պատիւս զինուորութեանց իւրեանց . ոչ ՚ի միտ սծելով նոցա զբան Առաքելոյն՝ որ ասէ , առ Հրեայո վասն Քրիստոսի . եթէ նախանձ առնելոյն իւրեանց , կրեսցեն զմահ :” որպէս և եղև իսկ : Քանզի Գօրգին խան ՚ի սակս բարկութեան սրտին իւրոյ , անպատիւ արար զնոսա . իսկ նոքա ՚ի նախանձուէ անոխոյթք լինելին . քանզի վաճառականք զօրով ամենեցուն նոցա՝ զինչ՞ գիտէին զպատուոց և մեծարանաց գործոց պատերազմականաց , վասն զի արք իրաւասէրք զօրով , իւրաքանչիւր ոք ՚ի տեղիս իւրեանց կային անփոյթք ամենայնի : —

Յաւուրն երրորդի և ՚ի ժամ միջօրէի՝ պատահեցաւ յանկարծակի պատահուամն , որ կատարեցաւ ՚ի վերայ Գօրգին խանին . քանզի ստելեալ ՚ի վրանէ իւրմէ վասն զբոսանաց՝ շրջէր

աստ և անդ 'ի մէջ բանակացն . վասն պարագայից պատերազմին' և զնաց մինչ եհաս 'ի վրանն **Մ**ահամադալիսանին՝ զոր կացոցեալ էր սպարապետ 'ի վերայ հինգ հազար հեծելազօրաց : **Ա**նդր մնացեալ սակաւիկ մի՝ յորժամ անդրէն դանակն յետս , **Մ**ահամադալիսանն հանդերձ այլ մեծամեծ օք՝ կամեցան ընկերել նմա 'ի ճանապարհին . այլ նա ոչ կամեցաւ , և հրամայեաց նոցա դնալ յետս և մնալ 'ի տեղին իւրեանց : **Ե**ւ ինքն տռանց ինչ զօրաց դարձաւ յետս , ընդ իւր ունելով զերեսին անձինս միայն՝ որոց առաջին էր քեռորդին իւր **Պ**արոն **Յ**ակօբջան անուանեալ , և երկրորդն՝ **Պ**արոն **Կ**ատուր **Ա**ռաքելեան , և երրորդն՝ **Մ**օնսիօս **Պ**էնթին , բարեկամն կամ լաւ ևս՝ խորհրդակից իւր՝ յազգէն **Փ**րանկսիզաց :

**Ե**ւ այն ինչ չէ հասեալ նորա 'ի վրան իւր , ել ոմն 'ի գնդէ պահապանաց վրանի իւրոյ՝ որք էին հեծելազօրք իբրև երեք հարիւրք՝ որոց **Ս**ոլարապետի անուն էր՝ **Պ**անմահամադ , **Ս**արբէկ անուամբ հեծելազօր ելեալ եկաց առաջն **Պ**օրդին խանին և ասէ , «**Թէ** տուր մեզ զվարձո մեր , զի 'ի սովու մեզանիմք .» **Պ**ատասխանի ետ նմա **Պ**օրդին խան և ասէ , «**Թէ** մոլիս այժմ , զի չե է աւուրս քսան՝ յոր ետու ձեզ զամենայն վարձս ձեր . այժմ զի տաց ,» **Չ**ունեմք գրամ , որով գնեցուք մեզ զկերակուրս , վասն որոյ պարտիս տալ՝ «**ասաց** հեծեալն : **Պ**ատասխանեաց **Պ**օրդին խան , «**Թէ** ոչ գիտես զինչ խօսիս , զնս գու առ զօրապետն քո և խնդրեան 'ի նմանէ զոր ինչ և կամիս ,» **Պ**ատասխանեաց ձիաւորն «**Կ**ես առ նա ոչ երթայց , այլ գու տուր ինձ այժմ :»

**Բ**արկացեալ ընդ այս **Պ**օրդին խանին յոյժ՝ հրամայեաց միւսմ 'ի **Պ**այեկաց կամ **Հ**արբարս ասացեալ պահապանայն՝ որ անդ էր , զի գնացեալ բերցէ վաղվազակի զայլ ևս արս եօթն , և կալեալ զնա գեցէ 'ի բանտի : **Ե**ւ այն ինչ շարունակել կամէր զճանապարհ իւր , յանկարծակի վազեաց ձիաւորն այն , և հանեալ զսուր իւր , բախեաց յուս **Պ**օրդին խանին : **Չ**որ տեսեալ ընդ նմա եղբայրն ամենեքին փախեան , և մնաց միայն՝ պարոն **Կ**ատուր **Ա**ռաքելեան՝ որ անկաւ 'ի վերայ **Պ**օրդին

խանին առ 'ի վրիկել զնա 'ի վերաւորելոյ , բայց ոչ եղև հնար . զի չունէր զսուր ինչ 'ի ձեռին իւրում : **Ի** կրկնել անօրինին զսուր իւր , թռեաւ **Կ**ատուր զի կալցէ . որ բախեալ եհաս զիէս աջոյ ձեռին իւրոյ . կառկառեաց սպաղձեռն ձախոյ՝ զի առցէ զսուրն՝ այլ հարեալ եհատ և զայն , վերաւորելով և զգլուխն :

**Յ**ոյնժամ տեսեալ նոցա թէ ոչ կարէին զեր ծանել , քանզի և եղբարք անօրինին սուսերամերկ դային 'ի վերայ իւրեանց , վասնորոյ և **Կ**ատուր սկաւ փախչել և ջանայր վասն **Պ**օրդին խանին զի փախնուցաւ և նա , արշաւեցուցանելով զերկուար նորա . բայց ոչ եղև հնար . քանզի պարան մի փաթու թեալ ընդ զոտամբք երկուարի **Պ**օրդին խանին՝ անկաւ յերկիր . առ որ հասեալ եղեռնաւորին եբաց զհինգ այլ ևս վերս որոց թէպէտ ամենեքեան մանուկք էին , բայց կողեց նորա մի վերն էր մեծ յոյժ :

**Յ**ետ այսր անօրէնու թեան փոխեաւ տիրասպանն , **Ե**ւ յորժամ լուան զօրք բանակացն , եկին համայնդամայն և անկեալ 'ի վերայ չորեսին հարիւրոց արանցն այնոցիկ՝ մաս մաս արարին զնոսա , և սրախսկսոյ կորուսին զամենեանն : **Բ**այց զաւուրս երկուս սրոնեալ՝ ոչ գլուխն վեղեռնաւորն զայն , քանզի աներևոյթ եղև մինչև ցայս օր :

**Յ**ետ բանիցս այսոցիկ բարձին զ**Պ**օրդին խան և տարեալ 'ի վրան իւր , ժողովեցան 'ի վերայ նորա բազում օշարաքք և բժիշկք , և արարին բազում հնարս և զօպեղանիս՝ իբրև ժամս երկուս . և ապա խնդրեաց զբահանոյ . խոստովան եղև զմեղս իւր , և առեալ զճաշակ **Ս**րբու թեան , յետ չորից ժամուց աւանդեաց զհոգին՝ յամի **Տ**եառն 1765 . յամսեանն **Օ**գոստոսի 11 , օրն երկուշաբաթի :

**Բ**այց մինչդեռ կենդանի էր լուաւ **Կ**ատուրալի խան զբօթալի լուրս՝ և ելեալ 'ի վրանէ իւրմէ հեծաւ 'ի փիղ և եկին 'ի տեսանել զնա . և յորժամ ետես արտասուալից աջօք , ասաց . «**Ի**զբայր զնորդ ոչ լուար ինձ , բանիցս պատուիրեցի քեզ՝ թէ առանց պահապանաց աստ անդ մի չըջեր .» և ավստասլով բազում մխիթարական բանս ասաց նմա , և ստիպեաց բժշկացն հոգ տանել նմա . խոստանալով նոցա

